ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԼԻԼՅԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ՊԵՏԱԿԱՆ - ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *տարածքային զարգացման անհամամասնություններ, ինստիտուցիոնալ նախադրյալներ, ՊՄԳ զարգացման ռազմավարություն, ՊՄԳ օրենսդրություն, հանրային պահանջմունքներ, հանրային ծառայություններ*

Հոդվածում քննարկել են պետական և մասնավոր համագործակցության գործընթացն արտահայտող հիմնահարցերը: Այդ համագործակցության անհրաժեշտության հիմնավորման հիմքում դրվել են մասնավոր և պետական հատվածների նպատակների, շահերի, խնդիրների ուղղվածության տարբերությունները և դրանց համատեղ իրագործման ու զարգացման կարևորությունը: ՊՄԳ-ն օգտագործում է մասնավոր հատվածի միջոցներն ու խթանները և հնարավորություն է տալիս կառավարության ու մասնավոր հատվածի միջև բաժանելու իրականացվող ծրագրերի ռիսկերը և մասնավոր կապիտալն ուղղելու դեպի ենթակառուցվածքի ոլորտ:

Ժամանակակից երկրներին բնորոշ է խառը տնտեսությունը, որտեղ համագործակցում են շուկայական և պետական հատվածները: Այստեղ, մասնավոր սեփականության և սեփականության այլ ձևերի հետ մեկտեղ, գոյություն ունի նաև պետական սեփականությունը, որը հանրային հատվածի հիմքն է:

Ակնհայտ է, որ շուկան ստեղծում է օբյեկտիվ տնտեսական պայմաններ երկրի զարգացման համար, զերծ է պահում հասարակությանը ապրանքային պակասուրդից, խթանում է ԳՏԱ-ն և այլն: Սակայն, այն չի լուծում հատկապես այնպիսի սոցիալ-տնտեսական խնդիրներ, որոնք հնարավոր չէ չափել դրամական արտահայտությամբ և գնահատել շուկայական չափանիշներով: Նման խնդիրներին վերաբերում են պաշտպանությունը, միասնական էներգետիկ ցանցը, մշակույթի, կրթության և առողջապահության համակարգը, խոշոր ներդրումային նախագծերը, որոնք կապված են մեծ ռիսկերի և միանվագ ծախսերի հետ:

Հետևաբար՝ մասնավոր և պետական հատվածները կոչված են լուծելու որոշակի խնդիրներ տնտեսության կարգավորման ոլորտում, իսկ դրանց համագործակցությունը պետք է ապահովի ամբողջ երկրի սոցիալ-տնտեսական արդյունավետ զարգացումը:

Պետության դերը շուկայական տնտեսության պայմաններում, այլ գործոնների հետ մեկտեղ, պայմանավորված է, առաջին հերթին, հանրային բարիքների և ծառայությունների ստեղծման ու տրամադրման անհրաժեշտությամբ: Այս գործառույթների իրակա-

նացման ընթացքում հաճախ առաջանում են խնդիրներ՝ կապված ֆինանսական միջոցների պակասի, տնտեսական արդյունավետության բարձրացման անհրաժեշտության հետ: Պետական և մասնավոր հատվածների համագործակցությունը նշված խնդիրների համակողմանի լուծման կարևոր միջոց է:

Պետական-մասնավոր համագործակցությունը (ՊՄԳ) հիմնականում ներակայացնում է ենթակառուցվածքի զարգացման և պետությանն ու հասարակությանը ծառայությունների տրամադրման եղանակ: Այն օգտագործում է մասնավոր հատվածի միջոցներն ու խթանները ենթակառուցվածքի և ծառայությունների զարգացման ոլորտում: Միաժամանակ, ՊՄԳ-ն ենթադրում է պետության կամ կառավարության առկայություն՝ իբրև պայմանագրի կողմ կամ կարգավորող մարմին, քանի որ ենթակառուցվածքի տրամադրած ծառայություններն ունեն էական նշանակություն հասարակության և տնտեսության զարգացման գործում, իսկ ենթակառուցվածքների ոլորտին բնորոշ են մրցակցության նեղ շրջանակներ:

ՊՄԳ-ների ձևավորման հիմքում կատարված ծախսերի և ստացված արդյունքների միջև եղած օպտիմալ հարաբերակցությունն է, որն արտահայտվում է արդյունավետության և համախառն արդյունքի աճի միջոցով ու բաշխվում մասնավոր հատվածի և հասարակության միջև:

ՊՄԳ-ն ապահովում է օգուտներ, որոնք դրսևորվում են գործունեության երկարատևության և ենթակառուցվածքի զարգացման ծրագրերի փուլերի զուգակցման հնարավորություններում: Ներդրողների ընդգրկումը տնտեսական գործընթացում նպատակ է հետապնդում բարելավելու տնտեսական գործունեությունը՝ համակարգելով նախագծման և շինարարության փուլերը, ինչպես նաև ներդրումային և գործառնական տարրերը:

«Խորացված» ՊՄԳ-ն ենթադրում է երկարաժամկետ ֆինանսավորում և որակյալ իրավաբանական և կարգավորման հիմնարկներ ու կազմակերպություններ: Նոր ձևավորվող շուկայում, որտեղ չկան նշված նախադրյալները, հաճախ օգտագործվում են ՊՄԳ-ների առավել «մակերեսային» տարբերակներ, որոնք նախատեսվում են ավելի կարճ ժամանակահատվածի համար, և մասնավոր կազմակերպությունները ստանձնում են ներդրումների կատարման ոչ մեծ պարտավորություններ:

ՊՄԳ-ների արդյունավետությունը ՀՀ-ում կախված է տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ընդհանուր մակարդակից: «Խորացված» ՊՄԳ-ներ հիմնվել են էներգիայի բաշխման, հեռահաղորդակցության և քաղաքացիական ավիացիայի ոլորտներում:

ՊՄԳ ձևավորման բնորոշ կողմերը կարելի է դիտարկել հետևյալ ուղղություններով.

- Այն երկրներում, որտեղ գոյություն ունի բյուջեի պակասուրդ կամ մեծ պետական պարտք և հետևաբար՝ պետական ծախսերի կրճատման անհրաժեշտություն, կան նաև նախադրյալներ պետական-մասնավոր համագործակցության համար:
- ՊՄԳ-ն կարող է օգտագործվել նաև այն դեպքերում, երբ չկան լուրջ սահմանափակումներ ֆինանսական ռեսուրսների գծով և տարվում է կառավարման մակարդակի բարձրացման և ռիսկերի հիմնավորված բաշխման քաղաքականություն:

- Եթե կառավարության մակրոտնտեսական քաղաքականությունը ներշնչում է վստահություն, կանխատեսելի է, ելնում է փողի արժեզրկման ցածր մակարդակից և արտարժույթի կայունությունից, ապա այդ ամենը նպաստում է տնտեսական աճին: Այս դեպքում, ամենայն հավանականությամբ, կօգտագործվեն ենթակառուցվածքի ֆինանսական, պետական-մասնավոր հատվածների համագործակցության մեխանիզմները:

Քանի որ ենթակառուցվածքի զարգացման նախագծերը կապված են զգալի ներդրումների հետ, ապա մասնավոր հատվածը կընդգրկվի ՊՄԳ-ի մեջ՝ եկամուտ ապահովելու դեպքում: ՊՄԳ նախագծերը զարգացնող և անցումային տնտեսություններում, իբրև կանոն, խրախուսվում են միջազգային կազմակերպությունների կողմից, որոնք պահանջում են տնտեսության ազատականություն, ներդրումների իրականացման և մակրոտնտեսական կայունության ապահովման համար բարենպաստ իրավիճակի ստեղծում, որոնք կարող են դառնալ ՊՄԳ ֆինանսական, տնտեսական աջակցության նախնական պայմանները[1]:

Այսպիսով՝ ՊՄԳ ձևավորման առանձնահատկություններ արտահայտվում են մի շարք մակրոտնտեսական գործընթացներում.

- Պահանջարկը և գնողունակությունը ծախսերի հետգնման չափանիշներ են, քանի որ որքան լայն է շուկան և բարձր է դրա գնողունակությունը, այնքան ՊՄԳ իրացման և արդյունավետ գործունեության հնարավորությունները մեծ են:
- ՊՄԳ-ն հիմնականում ձևավորվում է քաղաքականապես կայուն երկրներում, որոնք ունեն ամուր և արդյունավետ ինստիտուտներ և օրենսդրություն: Հետևաբար՝ ՊՄԳ հիմնավորման համար կարևոր նախադրյալ է տնտեսության կարգավորման անկախ մարմնի առկայությունը:

Պետական և մասնավոր հատվածների փոխադարձ գործունեությունը դրսևորվում է, երբ մասնավոր հատվածն իրականացնում է ենթակառուցվածքի օբյեկտների շինարարության և զարգացման ֆինանսավորումը, ինչպես նաև տրամադրում է ծառայություններ պետական կարիքների համար, որոնք ավանդաբար եղել են պետության գերակայություն և համարվել նրա սեփականությունը:

ՊՄԳ շրջանակներում տարբեր պայմանագրային հարաբերությունների առաջացումը և զարգացումը ենթադրում են կարգավորման արդյունավետ մոդելների ընտրություն: Այդ մոդելները վերաբերում են ենթակառուցվածքի քանակական, որակական հատկանիշներին, հասանելիությունը և արտահայտում, թե պայմանագրի կողմերը ինչ քայլեր պետք է ձեռնարկեն ներդրումների ու կառավարման ոլորտներում սպասվող արդյունքներին հասնելու համար:

ՊՄԳ-ն, բացի արդյունավետության բարձրացման շուկայական խթաններից, հնարավորություն է տալիս կառավարության և մասնավոր հատվածների միջև բաժանելու իրականացվող ծրագրերի ռիսկերը և մասնավոր կապիտալն ուղղելու դեպի ենթակառուցվածքի ոլորտ:

---

[1] Велисов М.В,, Государственно- частное портнерство: политико-прововой аспект. “Власть”, 2006, N 7.

ՊՄԳ զարգացման ծրագրերի և ուղղությունների բացահայտումը, ինչպես նաև դրա համակարգված և մանրամասն ուսումնասիրությունը կառավարության գործառույթների ու կառուցվածքի գնահատման ու կատարելագործման, նրա կողմից իրականացվող ծառայությունների բազմակողմանի վերլուծության, ՊՄԳ-ին ծառայությունների մի մասի փոխանցման կարևոր պայմաններ են: ՊՄԳ հաստատումը ենթադրում է ծախսերի ու օգուտների վերլուծություն, նախատեսում է հնարավոր բիզնես տարբերակի ընտրություն, ցույց է տալիս համագործակցության առավելությունները տնտեսական խնդիրների իրականացման զուտ պետական սկզբունքների համեմատությամբ:

ՀՀ տնտեսության ենթակառուցվածքի ոլորտում ՊՄԳ գործունեությունը գրանցել է որոշակի առաջընթաց: Դա արտահայտվել է ենթակառուցվածքի յուրաքանչյուր խոշոր հատվածում, այդ թվում՝ էներգետիկայում, հեռահաղորդակցությունում, փոստային ծառայություններում, ջրամատակարարման, կոմունալ ծառայությունների, համապետական նշանակության մայրուղիների, ինչպես նաև հանրապետության տնտեսության այլ ոլորտների և ցանցերի վերականգնման և պահպանման գործընթացներում: Այստեղ գործում են ՊՄԳ մոդելների հիմնական տեսակները՝ կոնցեսիոն պայմանագիր, օտարում, նոր շինարարության ծրագրեր, կառավարման և արենդավորման պայմանագրեր[1]:

ՊՄԳ հնարավորություններն օգտագործվում են ոչ միայն ենթակառուցվածքի ավանդական շրջանակներում, այլև այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը, առողջապահությունը, գործարարության խրախուսման ծառայությունները, տեղեկատվական տեխնոլոգիաները, հանրային ծառայությունների կառավարումը և այլն:

Ժամանակակից պայմաններում ՊՄԳ ներուժն ամբողջովին չի օգտագործվում, և ընթացիկ ծրագրերն էականորեն հետ են մնում պետության և հասարակության պահանջներից՝ ենթակառուցվածքի զարգացման հարցերում:

Դա մատնանշում է ՊՄԳ զարգացման ռազմավարության մշակման անհրաժեշտությունը՝ որպես խթան մասնավոր հատվածը ենթակառուցվածքում և պետական լայնածավալ ծրագրերում ներգրավելու գործում:

Իր հերթին, նման մոտեցումը կստեղծի բարենպաստ պայմաններ ՊՄԳ զարգացման և հավասարկշռված ու կայուն տնտեսական աճի ապահովման համար:

Հանրապետության մարզերում կան ենթակառուցվածքների զարգացման հետ կապված խնդիրներ, որոնց լուծման գործում ՊՄԳ-ները կարող են կարևոր դեր խաղալ՝ նպաստելով տարածքային զարգացման անհամամասնությունների մեղմացմանը: Այդ խնդիրների լուծումը ենթադրում է իրավական, տնտեսական, կարգավորիչ և այլ ինստիտուցոնալ նախադրյալների ստեղծում: ՀՀ-ում տնտեսության կարգավորման գործընթացը սերտորեն առնչվում է ՊՄԳ զարգացման պլանի հետ: Այդ տեսակետից, կարևոր է նախանշել ՊՄԳ ոլորտում պետության տնտեսական քաղաքականության ուղղությունները, նախատեսվող միջոցառումները, պատասխանատու մարմինների իրավասությունները և պարտականությունները: Իրականացվող տնտեսական քաղաքականությունը կնպաստի

[1] Հավելված ՀՀ կառավարության 2012 թ. սեպտեմբերի 20-ի N 1241 որոշման:

ՊՄԳ կարողությունների աճին ինստիտուցիոնալ, վարչարարական, ֆինանսական, մասնավոր հատվածի, սոցիալական ոլոտներում:

ՊՄԳ ոլորտում կառավարության իրականացրած քայլերը պետք է միտված լինեն.

- ոլորտում կառավարության լիազոր՝ պատասխանատու մարմնի ճանաչմանը և դրա հովանու ներքո՝ ՊՄԳ ոլորտի զարգացմանն միջոցառումների իրականացման կառույցի ստեղծմանը,
- ՊՄԳ եռամյա ազգային ծրագրի հաստատմանը,
- ոլորտին վերաբերվող օրենսդրության վերանայմանը,
- ՊՄԳ գործարքների թափանցիկության և ինստիտուցիոնալ հենքի բարելավմանը:

ՊՄԳ զարգացման գործընթացները կստեղծեն բարենպաստ պայմաններ ՀՀ-ում ոլորտի ամրապնդման համար՝ մեղմելով ենթակառուցվածքներում մասնավոր հատվածի մասնակցության՝ դեռևս պահպանվող խոչընդոտները: Դա ոչ միայն մասնավոր ներդրողների համար կապահովի վստահելի և նպաստավոր դաշտ, այլև մրցակցության և հանրությանը հաշվետու լինելու պայմաններում կտա համընդհանուր պահանջմունքների բավարարման լրացուցիչ հնարավորություն:

ՀՀ-ում ՊՄԳ ոլորտի ամրապնդմանն ուղղված քայլերը կընդարձակեն դրա ճյուղային, գործառութային և տարածքային ընդգրկման շրջանակներն ու կբարձրացնեն արդյունավետությունը, կդառնան տնտեսության պետական կարգավորման ազդեցիկ գործիքներից մեկը:

ЛИЛЯ КИРАКОСЯН

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ ГОСУДАРСТВЕННО-ЧАСТНОГО СОТРУДНИЧЕСТВА И ОСОБЕННОСТИ ЕГО ФУНКЦИОНИРОВАНИЯ В РА

Ключевые слова: *диспропорции территориального развития, институциональные предпосылки, стратегия развития ГЧС, законодательство ГЧС, общественные потребности, общественные услуги*

В статье рассмотрен процесс формирования и развития государственно-частного сотрудничества в инфраструктуре экономики. В основе обоснования необходимости такого сотрудничества положены различия целей, интересов и задач частного и государственного секторов, следовательно важность осуществления их совместной деятельности и эффективного сочетания. ГЧС использует средства и стимулы частного сектора и дает возможность разделить риски осуществляемых программ между правительством и частным сектором, а также направить частный капитал в инфраструктуру.

LILYA KIRAKOSYAN

THE BASIC PROBLEMS OF FORMATION AND DEVELOPMENT OF THE STATE-PRIVATE PARTNERSHIP AND PECULIARITIES OF ITS ACTIVITY IN THE REPUBLIC OF ARMENIA

Key words: *disproportions of territorial development, institutional prerequisites, development strategy of SPP, legislation of SPP, public needs, public services*

The basic problems, expressing the process of the state- private partnership are discussed in the article. In the basis of the substantiation of the need for this cooperation we can see the distinctions of the directions of the problems, interests and goals of the private and state sectors and importance of their mutual implementation and development. SPP uses private sector resources and gives an opportunity to separate risks of the programs between the government and the private sector and to direct the money-capital to substructure sphere.

ՌՈԶԱ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ
Դասախոս, հայցորդ ՀՊՏՀ ԳՄ

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Հիմնաբառեր. *փոխանցումային մեխանիզմ, կարճաժամկետ փոկոսադրույք, դրամավարկային քաղաքականություն, վերաֆինանսավորման դրույք*

Երկրների կենտրոնական բանկերը, իրականացնելով դրամավարկային քաղաքականություն, պետք է հստակ պատկերացում ունենան դրա ազդեցության լծակների մասին: ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության հիմքում ծավալային կարգավորման ռազմավարական ուղղությունն է: Իր գլխավոր նպատակի ապահովման ճանապարհին ՀՀ ԿԲ-ն գների ծրագրված մակարդակի ապահովման հարցում փորձում է հատուկ հետևողականություն ցուցաբերել փոկոսադրույքների փոփոխությունների նկատմամբ: Հոդվածում քննարկվել են դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմներին, մասնավորապես՝ փոկոսադրույքի լծակին առնչվող որոշ հարցեր:

Դրամավարկային քաղաքականության փոխանցման մեխանիզմներն այն ուղիներն են, որոնց միջոցով համապատասխան քաղաքականությունն ազդում է ձեռնարկությունների, սպառողների և ֆինանսական միջնորդների՝ տնտեսական գործունեություն իրա-